

Լ. ԲԱԲՍՅԱՆ

Լ Է Օ


(Առաքել Բարսիսանեան)

Կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ
յօրելեանի առթիւ.

ԹԻՓԼԻՉ

Տպարան Ա. Թառումեանի

1908



8(092)
F-12

Մ. 2 հրատարակություն

Լ. ԲԱԲՍՅԱՆ

Լ Է Օ

(Առաքել Բարասյանի)



Կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ
յօրեկանի առթիւ.


1553



Թ Ի Ը Լ Ի Զ
Տպարան Ա. Թառումեանի
1908



14780



Լ Է Օ
(Առաքել Բարսիսյան)

1883—1908

Յուրովին ազրատ և հասարակ ծնողների գա-
ւակ էր Առաքել Բարախանեանը (Աէօ): նա ծնուել
է Չուշում 1860 թ. ապրիլի 14-ին: նրա ծնողները
ապրում էին Չուշու յետ ընկած թաղերից մէկում և
անաղին զժուարութեամբ հազիւ կարողանում էին ի-
րանց ընտանիքի օրուայ պարէնը հայթհայթել: Ա-
ռաքելի հայրը՝ գերձակ Գրիգորը ստիպուած էր թող-
նել իր արհեստը, որովհետեւ զրանով չէր կարողա-
նում նոյն իսկ օրուայ հացի փող ձեռք բերել և Չու-
շու եկեղեցիներից մէկում ժամկոչ դառնալ: Սակայն
և այս պարագաները չէր կարող բազմանդամ ընտա-
նիքի գոյութիւնը պահպանել: Մի ընտանիք, որի մէջ
բացի Առաքելից կային նաև երեք քոյրեր և երկու
խորթ եղբայրներ, որոնք ոչնչով չէին օգնում այդ
խեղճ ու կրակ ընտանիքին: Գրա համար Առաքելի
մայրն էլ—եղիօաբէթը ստիպուած էր քաղաքի հա-
րուստ աներում լուացք անելով կամ հաց հունցելով
օգնութեան հասնել իր անձարակ տաւսնուն:

Ինական է, որ այդպիսի անօգնական ծնողները
չէին կարող ուշադրութիւն դարձնել իրանց փոքրիկ,
բայց ընդունակ գաւակի՝ Առաքելի կանոնաւոր կըր-
թութեան վրայ. հէնց զրա համար էլ սկզբնական

զրագիտութիւն սովորելու համար Առաքելին նրանք յանձնում են Շուշու խալիֆաներից մէկին՝ Ամիր վարժապետին, որի իսկական մանկավարժութիւնը իր երկար ճիպտան էր կապում: Այդ ճիպտաի հարւածներից Առաքելն էլ միւս աշակերտների պէս ու խալիք է ստանում իր մարմնի վրայ: Հասարակ զրագիտութիւնը մի կերպ սովորելուց յետոյ, ծնողները փոքրիկ Առաքելին տալիս են Չուշու թեմական դպրոցը, որի տեսուչը այդ ժամանակ գրաբարդէտ Մարտիրոս Պլուղեանն էր. ժամանակակից մտքով վերցրած, վերոյիշեալ դպրոցն այն ժամանակ ոչ մի կրիտիկայի չէր կարող դիմանալ. բայց այնուամենայնիւ իր աշակերտներին կրթական այդ հիմնարկութիւնը լաւ հայկաբանութիւն էր սովորեցնում: Գրագրոցական դասաւանդութեան ժամանակ ուսուցիչները իրանց ամենազլխաւոր ուշադրութիւնը դարձնում էին հէն հայկական պատմագիրների վրայ, որոնց գլխաւոր երկերը գրեթէ ամբողջապէս անգիր անել էին տալիս իրանց աշակերտներին: Գպրոցում տիրապետող ուղղութիւնը սխալատեքրականն էր, որի դարձը կազմում էր գրաբար լեզուն. Կենդանի լեզուի միակ գասագիրը թեմական դպրոցում այն ժամանակ երիցեանի «Ընթերցարանն» էր, որի խղճուկ բովանդակութիւնը Առաքելը անգիր էր արել: Աշակերտները ոչ միայն բերան էին անում չեք մատենագիրներէ գրուածքները, այլ և սովորում էին գրաբար ոտանաւորներ և շարագրութիւններ գրել: Առաքելի և նրա դասընկեր աշակերտների գրաբար ոտանաւորներից մի քանի նմուշներ մինչև անդամ տպուած

են Զմիւռնիայում հրատարակող «Արշալոյս» Արարատեան» թերթում, որոնք այն ժամանակ սիրով էին կարդացում: Առաքելը իր միջնակարգ և հայկական կրթութիւնը ստանում է թեմական դպրոցում, որի ուսուցչական կազմը բաւական աննախանձելի մտաւոր պաշարի տէր մարզկանցից էր բաղկացած: Իբրև ուսուցիչ այն ժամանակ աչքի էր բնկնում Գորպատի համալսարանը աւարտած Փափաղեան վարդապետը, որ լաւ ֆրանսիագէտ և յայտնի բանաստեղծ էր: 1874 թ. Առաքելը իբրև առաջնակարգ աշակերտ աւարտում է թեմական դպրոցի այն ժամանակւոյ լրիւ դասնթացը (4 դասարանեան) Խորէն վարդապետ Ստեփանէի տեսչութեան օրով:

Առաքելի ազրատ ծնողները անհամբեր սպասում են իրանց որդու դպրոց աւարտելուն, յոյս ունենալով, որ նա դրա շնորհիւ մի համեստ պաշտօնի տէր կը դառնայ և մի քիչ կապահովի իրանց բնաանիքի խղճուկ գրութիւնը: Սակայն թեմական դպրոցում ուսեբէն լեզուի դասաւանդութիւնը շատ թոյլ էր եղել, այնպէս որ Առաքելը չէր կարող նոյն իսկ գրազրի պաշտօն ստանալ որեւէ մէկի մօտ: Գրա հաժար էլ իր ազգականների խորհրդով Առաքելը 1874 թ. մտնում է Շուշու քաղաքային վերակազմեալ դպրոցը, որը նրա համար կրթական մի բոլորովին նոր աշխարհ էր թեմական դպրոցից յետոյ: Գպրոցի ուսուցչական խմբի մեծ մասը Աղէքսանդրեան դպրոցը աւարտած ազատամիտ և նոր հովերով բռնուած մանկավարժներից էր բաղկացած, որոնք իրանց առարկաները շատ լաւ էին գրել և աշակերտների մէջ հե-

տարբերութիւն զարթեցրել զրանց շուրջը: Ուսումնածարաւ և արտակարգ բնգունակութեան տէր Առաքելը այդ դպրոցումն էլ դառնում է իր աշակերտակիցների մէջ կենտրոնական անձնաւորութիւն, որի օգնութեանն էին դիմում շատ անգամ նոյն իսկ բարձր գասարանների աշակերտները իրանց զբաւոր շարադրութիւնները համար: Առաքելի բնգունակութիւնն ու բնթերցասիրութիւնը գրաւում է նաև իր ուսուցիչներէից շատերի ուշադրութիւնը, սրնցից մանաւանդ մէկը նրան շարունակ վիպական և հասարակագիտական բովանդակութիւն ունեցող գրքեր էր տալիս կարդալու:

1877 թ. սկսում է ռուս-տաճկական պատերազմը: Առաքելը գեռ քաղաքային դպրոցի վերջին գասարանի աշակերտ էր, երբ սկսեց Չուշուց թղթակցել Թիֆլիսում հրատարակող «Кавказъ» լրբազրին. նրա այդ առաջին թղթակցութիւնը աղմուկ է բարձրացնում ոչ միայն Չուշու հասարակութեան մէջ, այլ և դպրոցում, որի համար նկատողութեան է արժանանում դպրոցի տեսուչ Նիկիտինի կողմից: Այդ թղթակցութեան մէջ Առաքելը յայտնում էր, որ Ղարաբաղի թուրքերը անհամբեր սպասում են, թէ երբ պէտք է տաճիկները ներս մտնեն Ղարաբաղ, որպէս զի իրանք միանան նրանց հետ:

1878 թ. Առաքելը իբրև առաջնակարգ աշակերտ աւարտում է քաղաքային դպրոցը և բնտանեկան ծանր հոգսերի պատճառով չէ կարողանում իր ուսումը շարունակել և բարձրագոյն կրթութիւնը

ստանալ. չը նայելով որ տեսուչ Նիկիտինը նրան շարունակ խորհուրդ էր տալիս այդ, ի նկատի ունենալով նրա սէրը և բնգունակութիւնը:

Չուտով մեռնում է ժամկոչ Գրիգորը և իր ամբողջ բնտանիքի ծանր բեւը թողնում է Առաքելի վրայ: Նոյն թւականին Առաքելը գնում է նաւթային մայրաքաղաքը գործ գտնելու: Այնտեղ երկար ժամանակ պարսպ է մտնում և վատ ապրուստի պատճառով թոքերի բորբոքում ստանում: Բագում անցկացրած օրերը Առաքելը նկարագրել է իր «Պանգոլխտ» վերնագրով վիպակի մէջ, որի մէջ դուրս բերւած միջավայրումն է անցկացրել և նա իր տարիներից մէկը:

«Պանգոլխտ» վիպակի տակ Առաքելը առաջին անգամ ստորագրում է «Լէօ» կեղծ անունը, սրը նրա ամբողջ գրական գործունէութեան ժամանակ և մինչև այսօր էլ մնում է իբրև գլխաւոր կեղծ անունը:

Եթէ ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, թէ պատերազմից յետոյ ինչպէս թանգացել էր կեանքը—(ալիւրի փութը արժէր 4 ռուբլի) Չուշում, այն ժամանակ հասկանալի կրլինի նիւթական այն անտանելի կացութիւնը, որին ենթարկւած էր Լէօի բնտանիքը: Այն ժամանակ Լէօն իր բնտանիքով ապրում էր մի խրճիթում, որը նրանց յանձնել էր հարուստ քաղաքացիներից մէկը այն պայմանով, որ Լէօի մայրը ծառայէր նրանց տանը, իսկ իրանք պահպանէին այդ քաղաքացու պարտէզը:

Հօր մեծնելուց մի ամիս յետոյ Լէօն հասարակ
 դրագրի պաշտօն է ստանում քաղաքային նօտարի
 մօտ, ամսեկան 8 ուրբի առճիկով, որի maximum-ը
 հասնում էր 15 ուրբու: Բարոյական տեսակէտից
 դա մի այլանդակ շրջան էր, որի մէջ ստիպւած էր
 ապրել Լէօն. նրա ծառայակիցները թղթախաղու-
 թեամբ և գինեմոլութեամբ տարւած մարդիկ էին,
 որոնք, քիչ էր մնացել, որ Լէօնն խրէին տիղմի մէջ:
 Սակայն նա մի այգպիսի շրջանումն էլ ցոյց է տա-
 լիս իւր բարոյական տոկունութիւնը և ազատ ժամե-
 րին պարապում է ընթերցանութեամբ, թարգմանու-
 թիւններով և իր սուղ միջոցներով նոյն իսկ թեր-
 թեր է ստանում:

Նօտարի մօտ գրագրի պաշտօնով մնում է
 1879-81-ի մարտը, որից յետոյ նա տելեգրաֆիս-
 տի պաշտօնով մանում է Չուշու հեռագրատունը
 23 բուրբի առճիկով և այդ հիմնարկութեան մէջ ծա-
 ռայում է մինչև 1893 թիւը: Դեռ նօտարի մօտ ե-
 դած ժամանակ մէկ-մէկ թղթակցութիւններ էր ու-
 զարկում Թիֆլիսի օրաթերթերին օրուայ գէպրերի
 մասին, որոնց բովանդակութիւնը կազմում էին
 Չուշու դաւառական կեանքի զանազան վաշխաու-
 ների բացասական գործերը, ժամանակակից կեան-
 քի թանդութիւնը և ուրիշ հարցեր:

1880/81 թուականներին Չուշու մտաւոր հե-
 տաքրքրութեան գլխաւոր կենտրոնը ներկայացնում
 էր անդական երիտասարդ ինտելիգենտների մի շքե-
 ջան, որի մէջ այն ժամանակ աչքի էին ընկնում Ղ.
 Աղայեան, Ս. Մանգինեան, Տ. Նուգրեան, Ն. Տէր-

Աւետիքեան, Ս. Հախումեան, Թոխմախեան, Յով-
 հաննիսեան և ուրիշները: Այդ շրջանում գրական մի
 բաւական համեստ շարժում կար: Վերոյիշեալ ինտե-
 լիգենտները պարբերական ժողովներ էին անում,
 պարապում էին խմբական ընթերցանութեամբ և
 նոյն իսկ մանկական դրքեր էին հրատարակում:
 Չուշու տպարանատէրը այդ դրքերի համար սրբա-
 գրիչի պաշտօնով հրաւիրում է Լէօնն: Քիչ ժամա-
 նակից յետոյ Լէօն առիթ է ունենում անձամբ ծանօ-
 թանալ այդ ապարանում հրատարակող գրքերի հրա-
 տարակիշները հետ և շուտով դառնում է վերոյիշ-
 եալ շրջանի մօտիկ անդամներից մէկը: Բնական է
 այն բարերար և դրական ազդեցութիւնը, որ ունե-
 ցաւ վերոյիշեալ շարժումը Լէօի վրայ: Այդ տպա-
 րանում տպւեց առաջին անգամ և Բաֆֆիի «Խեն-
 թը» և Ապրէսեանի հրատարակութեամբ, որով Լէ-
 օն այնքան է յափշտակոււմ, որ կարգում է եօթն
 անգամ:

Չուշու ինտելիգենտ շրջանում Լէօի սէրը դե-
 պի գրականութիւնը և հայ մատուլը աւելի է զար-
 զանում: Նա այժմ սկսում է յաճախակի թղթակ-
 ցութիւններ ուղարկել Թիֆլիսի հայկական ամե-
 նօրեայ պարբերական թերթերին: 1882 թ.
 Լէօն ստանում է «Մշակ» լրագիրը: Գրիգոր Արծրու-
 նու առաջնորդողները ցնցող տպաւորութիւն են
 թողնում երիտասարդ Լէօի վրայ: Այդ առաջնոր-
 դողներից մանաւանդ մէկը, որտեղ Արծրունին մատ-
 նացոյց էր անում մեր դաւառներում թազաւորող
 մտաւոր խաւարի վրայ և պախարակում բազմազան

օգնութեան կարօտ գաւառներէից խոյս տուող հայ
 քննախնամներին, առանձնապէս զբաւուր է Լէօօի
 ուշադրութիւնը: 2է՛ որ նա էլ մի այդպիսի գաւա-
 ուի սրտացաւ երիտասարդ էր, որին շատ լաւ ծա-
 նօթ էին հայ գլխաւոր գաւառներէից մէկի ցաւերն
 ու կարիքները: Քր. Արծրունու մտքով Լէօն էլ գրում
 է իր առաջին թղթակցութիւնը «Մշակ»-ին 1882 թը-
 ւին, որով և նա միանգամ ընդմիշտ կապում է
 «Մշակ»-ի հետ: Առաջին յօդուածի լոյս տեսնելուց
 խրախուսուած, Լէօն «Գաւառացի» կեղծ ստորագ-
 րութեամբ «Մշակ»-ին պարբերաբար ուղարկում է մի
 շարք թղթակցութիւններ, որոնց նիւթը վերցրած էր
 Չուշու տեղական կեանքից: Այդ թղթակցութիւնները
 շուտով արժանանում են Արծրունու առանձին հե-
 տաքրքրութեան և ուշադրութեան: Մի քանի ամօից
 յետոյ Լէօն սկսում է «Մշակ»-ում դեռանդել քանասի-
 րական յօդուածներ, որոնց նիւթը կազմում էր հայ-
 կունու քննադատութիւնը Քաճիսի մասին: Արծրու-
 նին նամակներով և Շուշի գնացող ծանօթներով շա-
 րունակ գովում և խրախուսում էր Լէօնին: Վերջինս
 արդէն դառնում է «Մշակ»-ի կանոնաւոր աշխատա-
 կիցներից մէկը: 1883 թ. Չուշու առանձին զբոյժով
 լոյս է տեսնում Լէօի թարգմանութեամբ Մօրգովցի վի
 «Արարատի դուրսը» վերնագրով աշխատութիւնը, ո-
 րի մէջ հեղինակը նկարագրում է իր կատարած ճա-
 նապարհորդութիւնը Երևանի հասնելու և Մասի-
 սի գաղաթը բարձրանալը:

1884 թ. հայկական հասարակական կեանքի խո-
 շոր երևոյթներից մէկը կաթուղիկոսական խնդիրն

էր: Դէորդ Գ.-ի մահից յետոյ կաթուղիկոսական ա-
 թոռը թափուր էր մնացել և սպասում էր նոր կա-
 թուղիկոսի ընտրութեան: Կովկասում սկսել էր կա-
 թուղիկոսական պայքարը, որին եռանդուն կերպով
 մասնակցում էր նաև «Մշակ»-ը: Նախընտրական
 պայքարը եռում էր նաև Չուշում, որ նրա բնակիչ-
 ներին բաժանել էր կուսակցական խմբերի: Լէօն իր-
 քն աչքի ընկնող «Մշակական» քննախնամներից
 մէկը՝ կուսակցական կռիւներ է մղում Չուշու պահ-
 պանսրական տարրի դէմ և պրոպագանդա է անում
 յօդուած «Մշակ»-ի կաթուղիկոսական թեկնածուի: Այդ
 խնդրի առթիւ նա էր Չուշուց գլխաւոր աշխատակ-
 ցողը «Մշակ»-ին:

1884 թ. առանձին զբոյժով Չուշում լոյս է տես-
 նում Լէօի առաջին քննադատական աշխատութիւնը «Ռեխ-
 տաւորի յիշատակարանը», որտեղ հեղինակը շնորհա-
 լի կերպով նկարագրում է իր ճանապարհորդութիւնը
 դէպի Ղարաբաղի նշանաւոր վանքերից մէկը՝ «Տիգր-
 փայտ» կոչուած ուխտատեղին: Այդ միևնոյն թուա-
 կանին Գ. Արծրունին ստիպուած է լինում նիւթա-
 կան սուղ միջոցների պատճառով ժամանակուորա-
 պէս դադարեցնել «Մշակ»-ի հրատարակութիւնը, յոյս
 ունենալով ապագայում նոր միջոցներով վերսկսելու
 իր թերթի հրատարակութիւնը: Անհնայ այդ գա-
 տարած «Մշակ»-ի վերջին համարներում տպւում է
 Լէօի առաջին վէպը «Մնապաշտութեան քուրմ» վեր-
 նագրով: Վերջինս Չուշու գաւառական կեանքից
 վերցրած մի պատկեր էր, որտեղ հեղինակն բաւական
 հստակութեամբ դուրս է բերում մի կախարհ, որ

խարում է ծանր հիւանդ ունեցող տէրերի, իբր թէ ինքը կարող է բժշկել հիւանդին և նիւթականապէս շահագործելով նրանց, ի հարկէ ոչնչով չէ կարողանում օգնել հիւանդին, որ և շուտով մեռնում է:

«Մշակի» դադարելուց յետոյ Լէօն գրում է Ա. Յովհաննիսեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Արձագանք» շաբաթաթերթում, որի յարաբերութիւնը «Մշակ» լրագրի հետ դեռ ևս այնպէս թշնամական չէր, ինչպէս որ եղաւ վերջին տարիները, երբ արդէն «Արձագանք»-ը օրաթերթ էր դարձել: Լէօն, որ այդ ժամանակ ինքնակրթութեամբ արդէն բաւական մը տաւոր պաշար էր ձեռք բերել և ծանօթացել ուսս գրականութեան նշանաւոր ներկայացուցիչների գլխաւոր երկերի հետ, այժմ սկսում է «Արձագանք»-ին աշխատակցել ոչ միայն տեղական կեանքին վերաբերող թղթակցութիւններով և յօդուածներով, այլ և պատմական մանր ուսումնասիրութիւններով:

1885 թ. Մարտէլում սկսում է հրատարակել Մկրտիչ Փոթթուզալեանի խմբագրութեամբ «Արմենիա» լրագիրը, որի գլխաւոր նպատակն էր արտասահմանում պրոպագանդա անել «հայկական դատի» համար: Երիտասարդ զրոյ Լէօն իր գրական բեղմնաւոր աշխատանքից բաժին է հանում նաև այդ հայ թերթին, որտեղ «ուսահայ» ստորագրութեամբ գետեղում է յօդուածներ և երկու փոքրիկ պատկերներ, որոնցից մէկը— «Հայ գիւղացի»-ն պատկերացնում է հայ ժողովրդի այդ աշխատասէր մասի ժամանակակից աննախանձելի գրութիւնը, իսկ երկրորդը մի վկայի է ուս-տանկական պատերազմից:

1886 թ. վերսկսում է «Մշակ»-ի հրատարակութիւնը: Գ. Արծրունին «Մշակ»-ի շուրջն է համախորհում իր նախկին գլխաւոր աշխատակիցներին, որոնց թւում և Լէօնն: Վերջինս, որ նախկին տարիներում յաճախակի էր արժանացել Գ. Արծրունու խրախուսանքներին և զովեստներին «Մշակ»-ում գետեղած իր շնորհալի թղթակցութիւնների, յօդուածների և պատկերների համար, այժմ աւելի ուժգին թափով ու եռանդով սկսում է իր սիրած թերթին աշխատակցելը: Մէկը միւսի հետեւից պրում է յօդուածներ, թղթակցութիւններ, պատկերներ, վէպիկներ, գրական, մանաւանդ քննադատական յօդուածներ և այլն: Այդ շրջանի սկզբում Լէօն պրած աչոյ պատկերներից մէկն էլ նրա «Պանդուխտ» վերնագրով գրուածքն է, որի մէջ բաւական սչոյ կերպով պատկերացրել է պանդխտութեան վնասակար և քայքայիչ հետեանքները: Արծրունին մի առանձին առաջնորդող նուիրելով այդ վէպիկի (1888) մէջ հեղինակի արժարժած մտքին, ցոյց էր տալիս պանդխտութեան կորստաբեր հետեանքները: Դրանից յետոյ Լէօն գրում է մի շարք ուրիշ պատկերներ, որոնց մէջ շատ կենդանի կերպով դուրս էին բերւած դաւառական կեանքի մի քանի սովորական տիպեր (ազա հոգաբարձու, գաւառական հասարակական գործիչներ և այլն): Դրանց ընդհանուր խօսքերով կարելի է կոչել կենցաղավարական պատկերներ: Դրանց շարքում կարելի է գասել հեղինակի «Ծայրեր»-ը (Զուշու ըջալիտների հրատարակութեամբ) «Գաւառական հերոսներ» և այլն: 1888 թ.ին Լէօն «Մշակ»-ում տալիս է նաև մի քա-

նի ընդարձակ ուսումնասիրութիւններ Տաճկահայ կին գրող Տիւսաբի և Գարեգին Սրուանձտեանի երկերի մասին, որոնք քննադատական մեծ արժէք ունեն:

Միևնոյն թւին Լէօն աշխատակցում է մանկական «Աղբիւր» ամսագրին «Լէօ» և «Հրահատ» կեղծ անուններով, որտեղ գետեղում է մեծ մասամբ պատմական վէպեր («Թաթարման դիշեր», «Սպանւած հայրը» և «Վահան Մամիկոնեան»), որոնք յետոյ արտատպւում են առանձին գրքերով: Գա «Աղբիւր» ամսագրի ծաղկած ժամանակն էր, որի մէջ Լէօն գլխաւոր աշխատակիցներից մէկն էր Ղ. Աղայեանի հետ միասին: Այդ ամսագրումն է լոյս տեսնում Լէօի նաև մեծ մարդկանց կենսագրութիւնների ժողովրդական տերիան «երեսլի մարդիկ» ընդհանուր վերնագրի տակ: Այդ կենսագրութիւններից նշանաւոր են «Վիկտոր Հիւզօ»-ն և «Լիփինգտօն»-ը:

1889 թւին հրատարակւում է Ա. Արաօխանեանի «Մուրճ» ամսագիրը, որի գլխաւոր աշխատակիցների շարքումն էր նաև Լէօն: Այդ ամսագրումն են լոյս տեսնում հեղինակի Ղարաբաղի Խաչէն դաւառում կտտարած ճանապարհորդութեան շատ գեղեցիկ, կենդանի և ընդարձակ նկարագրութիւնը «Հինգ օր» վերնագրով, յետոյ «Կորածներ» վէպը, հրատարակախօտական մի շարք յօդածներ «Գաւառական կեանք» ընդհանուր վերնագրով և որբիշ գործեր: Միաժամանակ նա աշխատակցում է Մ. Բարխուդարեանի «Հանդէս գրականական և պատմական» պարբերական ժողովածուներում, որ լոյս էր տեսնում Մօսկուայում: Այդ հանդէսումն է տպուել

Լէօի ընդարձակ քննադատութիւնը «Դաւիթ և Մըհերի» մասին և «Մեր Մարկոս» վէպիլը դիւզական կեանքից վերցրած: Այդ վէպիկում հեղինակը դուրս է բերում մի գիւղացի, որ թողնում է իւր հայրենի հողը, վերադառնում մի քաղաքի անսովոր շրջան և դրանով կորցնում իւր անտեսական բարեկեցութիւնը:

1890 թ. Թիֆլիզում Տ. Նազարեանի խմբագրութեամբ հրատարակւում է «Տարազ» պատկերազարդ շաբաթաթերթը, որի խմբագիրը Լէօնն հրաւիրում է նաև իւր այդ երկրորդ թերթին աշխատակցելու: Լէօն արդէն այնպիսի առաջնակարգ գրողների շարքն էր անցել, որի աշխատակցութիւնը գրաւական էր համարւում իւրաքանչիւր նոր հայ թերթի ապագայի համար: Այդ շաբաթաթերթում Լէօն հրատարակում է Ղարաբաղի միլիքների կռիւը պատկերացնող մի պատմական վէպ «Վերջին վերքեր» վերնագրով և «Գողացած աօտը» պատկերը, որ դաւառական բարբերի և հասկացողութիւնների մի նկարագրութիւն էր: Դրանից առաջ Լէօն մի առանձին գրքով լոյս էր ընծայել իւր «Վէպ, թէ պատմութիւն» գրուածքը, որ ներկայացնում էր կեղծիքը դուրս հանող մի քննադատական աշխատութիւն Մ. Վ. Բարխուդարեանի «Դադանիք Ղարաբաղի» գրուածքի մասին, նոյն տարւոյ գործ է և Լէօի «Կոյրի սղջիկը» վերնագրով գեղեցիկ պատկերը, որտեղ նկարագրւած աղջիկը մի փոք հացի համար զօ՛ն է դառնում մի անբարոյական հարուստի:

1891 թ. «Մշակ»-ինստիտիւտի աշխատակից Խ. Մալու-

44288
1553



մեանի հրատարակութեամբ Թիֆլիզում լոյս է տեսնում ժողովրդական գրքերի մի սերիա, որի ամենաազոյ հրատարակութիւններից մէկը «Արնագին» վիպակը պատկանում է Լէօին: Գիւղական վաշխառուների կեանքը զեղեցիկ կերպով պատկերացնող այդ վիպակը մինչև այժմ էլ համարւում է հեղինակի գեղարուեստական յուսագոյն երկերից մէկը:

1893 թ. Լէօի կեանքում մի մեծ փոփոխութիւն է կատարւում, որը ահագին ազդեցութիւն է ունենում նրա ապագայ դարգացման և գրական գործունէութեան վրայ: Մինչև այդ թւականը նա ջուշում իւր ընտանիքի գոյութիւնը պահպանում էր տեւեգրաֆիստի սաշտօնով, որի ոսճկի maximum-ը վերջին տարին 45 ուրբու էր հասնում: Նա տեղափոխւում է Բագու «Արօր» տպարանի կառավարչի պաշտօնով: Սկզբում նա այդ պաշտօնում չը կարողացաւ գրական ինտենզիւ աշխատանքներով զբաղւել, որովհետեւ տպարանական ծանր գործերը ամբողջապէս կլանում էին նրա ժամանակը և բացասական ազդեցութիւն թողնում նրա առողջութեան վրայ:

Ազատ ժամանակը նա նւիրում էր «Արօր» պատկերազարդ օրացոյցների խմբագրութեան, որ հրատարակում էր նոյն տպարանը: Այդ օրացոյցները իսկապէս գրական ժողովածուներ էին, որոնց գրէթէ բոլոր մասերը գրւում էր Լէօն, դրանց մէջ նա ունի պատմական, գրական, քննադատական և փճակադրական գրուածքներ, որոնք իւր ժամանակին շատ էին տարածւում և մեծ հետաքրքրութեամբ

կարդացւում: Բագուում Լէօն լոյս ընծայեց իւր «Արտահանութիւն» վէպը և անտեղից աշխատակցում էր «Մշակ»-ին և «Եղբիւր»-ին գրական և հրապարակախօսական յօդւածներով:

1895 թ. երբ մեռել էր տիկին Մելիք-Ազամալեան-Արծրունին, նա «Մշակ» լրագիրը կտակել էր իր ամուսնու կրթայր պրօֆ. Անդրէաս Արծրունուն: Վերջինս չը ցանկանալով թողնել Գերմանիայի Ալէն քաղաքի բազմարուեստեան դպրոցում իւր պրօֆէսորական պաշտօնը, անունով յանձն առաւ «Մշակ»-ի հրատարակչի պաշտօնը և վճռել էր նորից վերադառնալ Գերմանիա: Նա Թիֆլիզում եղած ժամանակ «Մշակ»-ի համար կազմակերպւում է խմբագրական մի նոր կազմ և Լէօին Բագուից հրաւիրւում է խմբագրութեան մշտական աշխատակցի և բարտոզարի պաշտօնով: Այդ օրուանից սկսւում է Լէօի գրական և հրապարակախօսական գործունէութեան մի նոր և աւելի արդիւնաւէտ շրջանը, որ տևում է մինչև 1906 թւականը: Մինչև այդ ժամանակ նա չէր կարողացել իրեն ամբողջապէս նուիրելու գրական գործունէութեան, որովհետեւ նա ստիպւած էր իր ընտանիքի գոյութիւնը պահպանել կուելով իրեն շրջապատող նիւթական ամենամանախանձելի պայմանների դէմ: Այժմ խմբագրութեան մէջ մշտական աշխատակցի պաշտօն ստանալով ամենահամեստ ոսճիկով, հնարաւորութիւն էր ստանում զոնէ ուրիշ գործերով չը պարապել:

Անդրէաս Արծրունու հրաւերը Լէօն ուրախութեամբ ընդունեց և վերջնականապէս տեղափոխեց

Թիֆլիզ: Զատ պատասխանատու աշխատանք էր պահանջում նրա այդ պաշտօնը: Խմբագրութեան մէջ նրան վիճակուած էր առաջնակարգ դեր խաղալ, սրովհետև նա իր ուսերի վրա տանում էր այդ թերթի գլխաւոր բաժիններից մի քանիօր: «Մշակի» համար նա գրում էր առաջնորդող յօդուածներ, պատկերներ, վէպեր, քննադատական պատմական և գրական ուսումնասիրութիւններ: Առանձնապէս նա շատ է գարգացնում լրագրի բննագատական գրախօսական բաժինը և մարտական մասի ամբողջ ծանրութիւնը իր վրա առնում: Թւել այն քոլոր աշխատութիւնները, որ նա զետեղել է «Մշակ»-ում 1895—1906, նոյն իսկ ֆիզիքապէս անհնարին է: Չափազանցութիւն չի լինիլ, եթէ ասենք, որ այդ շրջանի «Մշակ»-ի գրէթէ իւրաքանչիւր համարի հետ կապուած է Լէօի կենտրոնական անունը: Բացի բաղմամբիւ լրագրական գործերից Լէօն այդ շրջանի «Մշակ»-ում հրատարակում է «Մեկիքի ազգիկը» պատմական մեծ վէպը, «Ազգի պահապան», «Գերեզմաններն են իստում» վիպակները և նոր Տարուայ ու Զատիկի առիթներով գրած պատկերները: Այդտեղ են յոյս տեսնում և նրա «Կրետէի ազատագրութեան» մանրամասն պատմութիւնը և հերթական քաղաքական հարցերի մասին յօդուածները: Աչքի են ընկնում նաև Լէօի պատմական-հրապարակախօսական ընդարձակ յօդուածներից մանաւանդ երկուսը— «Չին ուրուականը» և «Իլիա ճաւճաւաճէ»-ն. առաջինը ուղղուած է այն կաթոլիկ միսիօնարների դէմ, որոնք Վանում սովի ժամանակ սովեալ հայերին դրամ բաժանելիս պրո-

պագանդա են անում հաւատափոխութեան համար: Այդ բանի համար Հայր Չարմտանը այնքան էր ոգևորել, որ Եւրօպայում նոյն իսկ լուրեր էր տարածել, թէ Վանի հայերը իրանց տարբեր հաւատի համար են ենթարկել այգօրինակ մի մեծ աղէտի:

«Իլիա ճաւճաւաճէն» իւր ժամանակին մեծ տրպաւորութիւն է թողել հայ քննիչներին վրայ: Երբ վրացի այդ նշանաւոր գրողը հրատարակեց իր «Հայերը և աղաղակող քարերը» վերնագրով շովինիստական աշխատութիւնը, որով վրացիներին զրգրում և սաստիկ յարձակում էր հայերի դէմ, Լէօն այդ գրուածքին Գ բանասիրական է նւիրում, որոնց մէջ նա դատաւարտում է վրացի հեղինակի թունաւոր շովինիզմը. հերքում է նրա զրպարտութիւնները և սխալները հայերի նկատմամբ, պատճառաբանելով որ հայերը և վրացիները միանման ճակատադրի զաւակներ են, հետևապէս և վնասակար է նրանց մէջ թոյն պատուստելը:

Լէօն ընդհանուր վերնագիրների տակ պարբերական մի քանի բաժիններ է սկսում «Մշակ»-ում, որոնց գլխաւոր նիւթերը օրուայ հերթական հարցերն էին մատակարարում: Այդպէս էին օր. «ընթերցողի օրագիրը», «կիրականօրեայ գրոյցներ» և այլն: Բացի դրանից նա մի քանի տարի շարունակ տանում է «Մամուլ»-ի բաժինը, որի մտցնողը առաջին անգամ «Մշակ»-ում լինում է Լէօն, որ մեծ ընդունելութիւն է գտնում ոչ միայն ընթերցողների, այլ և հայկական միւս թերթների և ամսագիրների կողմից:

Եղել է նաև այնպիսի ժամանակ, երբ Լէօն

կատարել է խմբագրի պաշտօնը և միայնակ տարել է ամբողջ թերթը, երբ խմբագրութեան բոլոր անդամները քացակայ էին քաղաքից: «Գրական զէմբեր» ընդհանուր վերնագրի տակ Լէօն տել է մի քանի գրական անալիզներ Գամառ-Քաթիպայի, Ս. Նազարեանի և ուրիշների մասին:

Ինչ ևս «Մշակ»-ի խմբագրութեան մշտական աշխատակիցն էր Լէօն, երբ նրա համարներում սկսեց լոյս ընծայել իր մեծ և նշանաւոր աշխատութիւններից մէկը՝ «Հայկական տպագրութեան» I հատորը: Պատմական այդ աշխատութիւնը կազմւում է Լէօի երկարամեայ պատմական ուսումնասիրութիւնների գլխաւոր արդիւնքը, որի նպատակն էր հայ ժողովրդին տալ պատմութիւններ նրա անցեալ մտաւոր, կուլտուրական և քաղաքական կեանքից, որը գրեթէ բոլորովին անծանօթ էր նրան: «Հայկական տպագրութեան» այդ հատորը իր մէջ ամփոփում էր հայերի պատմութիւնը XVI—XVII դարերում, պատմական մի այնպիսի նիւթ, որի համար հեղինակը անագին աշխատանք էր թափել: Հեղինակը այդ գործի վերնագիրը գրել է «Հայկական տպագրութիւն», որովհետեւ տպագրութիւնն է այն առանքը, որի շուրջը պտոյտ է գալիս հեղինակի պատմական այդ աշխատութիւնը: Իր տեսակի մէջ Լէօի այդ գործը առաջինն է, որովհետեւ դա մատչելի և կենդանի կերպով պատմում է հայերի անցեալը երկու դաւերում: Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ նա կարճ ժամանակից յետոյ արժանացաւ երկրորդ փոփոխւած և լրացրած տպագրու-

թեան: Պատմական ուսումնասիրութեան այդ գործի շարանակութիւնը կազմում է դրա երկրորդ հատորը, որ լոյս տեսաւ առանձին գրքով:

Հայկական տպագրութիւնից առաջ Լէօն լոյս էր ընծայել Թիֆլիսի «Հայոց հրատարակչական քննիչութեան» հրատարակութեամբ անդլիական պետական մարդասէր գործիչ «Գլադստօն»-ի կենսագրութիւնը, որ այնքան մեծ դեր էր կատարել Հայկական դատի պաշտպանութեան գործում, նախապատրաստելով Անգլիայում հասարակական կարծիք վերոյիշեալ գատի համար:

Լէօն իր գրական առաջադիմութեամբ գրեթէ ամբողջապէս պարտական լինելով իւր ուսուցիչ Արժրունու և նրա սանդած շէօյային, չէր կարող անտես անել այդ ուսուցչի կատարած դերը մեր իրականութեան մէջ: Եւ անա Արժրունու կեանքն ու գործունէութիւնը նա դարձնում է իւր խոշոր ուսումնասիրութիւններից մէկի նիւթը, «Գրիգոր Արժրունի» վերնագրով: Այդ եռահատոր աշխատութեան մէջ Լէօն տալիս է Գ. Արժրունու կեանքի ու գործունէութեան մանրամասն տեսութիւնը: Նա դրա մէջ առատ փաստերով և օրինակներով աշխատում է ապացուցանել, որ Գ. Արժրունին իր ժամանակին երևան է գալիս իբրև առաջին մեծութիւնը հայկական հրատարակախօսութեան ասպարիզում: Թէև Արժրունուց առաջ էլ մեր մէջ երևան են կիկլ ազնիւ, առաջադիմ և իրանց ժողովուրդի բարոյական վերամշակութեամբ ոգևորւած հրատարակախօսներ, սակայն նրանցից և ոչ մէկը Արժրունու պէս չէ ունեցիլ բեղմնաւոր և

երկարատև գործունէութիւն, տնտեսական եռանդ, մեծ տաղանդ և հասարակութեան վրայ մեծ ազդեցութիւն: Լէօի կարծիքով Արծրունին իր ժամանակի, իր շրջանի խոշոր պատմական անձնաւորութիւնն է, որ հայ հասարակութեան միտքը տանում էր դէպի առաջ, դէպի լոյս և իմացականութիւն:

Եյզ աշխատութիւնից առաջ Լէօն առանձին գրքերով լոյս էր բնծայել «Յովսէփ կաթուղիկոս Լորդութեան», «Ստեփաննոս նազարեան» (2 հատոր) և «Ս. Մեսրոպ» գրուածքները, որոնց մէջ նա տալիս էր վերոյիշեալ պատմական անձնաւորութիւնների մանրամասն կենսագրութիւնն ու գործունէութիւնը:

1901 թւից սկսած Լէօն միաժամանակ սկսում է աշխատակցել նոր շրջանի «Մուրճ» ամսագրին, որ հրատարակում էր Կ. Կրասիլնիկեանի խմբագիր-հրատարակչութեամբ: Լէօն հրաւիրում է նոր ամսագրի մշտական աշխատակից և միևնոյն ժամանակ խմբագրութեան անդամ և եռանդուն ու պատասխանատու մասնակցութիւն է ունենում ամսագրի բովանդակութեան նկատմամբ: «Մուրճ»-ում նա վարում է մշտական բաժնիներ, օր. դաւառական կեանքի տեսութիւն, պարբերական մամուլ և միշտ մատնակցում է խմբագրական ժողովներին: Եյզպէս նա աշխատակցում է մօտ 2 տարի «Մուրճ»-ին և հրատարակում է այնտեղ «Հայոց գրականութիւնը 18-րդ դարում», այսինքն «Հայկական տպագրութեան» Բ. հատորը: «Մուրճ»-ումն են լոյս տեսնում Լէօի «Այծարած Եղօն», «Հողի մարդիկը» և «Անզուգական» վէպերը և զրական ու քննադատական բազմաթիւ յօդուածներ: Բացի դրան-

ցից նա «Գրական կորուստներ» ընդհանուր վերնագրի տակ ծանօթացրել է հայ ընթերցողներին թիւրքահայ Մ. Մամուրեանի, տիկ. Սրբ. Տիւսաբի և Ստեփան Ռսկանի գրական գէմքերի հետ: Մի խօսքով Լէօն կազմում էր Կրասիլնիկեանի «Մուրճ»-ի ամենադիտար նեցուկը, որի վրայ ծանրանում էին այդ ամսագրի մի քանի պատասխանատու բաժնիները: Նրա ամենավերջին աշխատութիւնը, որ սկզբում տպուեց Վենետիկի Մխիթարեանների «Գեղունի» պատկերազարդ հանդիսում և տպա առանձին գրքով լոյս տեսաւ, «Ռուսահայոց գրականութիւնն» էր: Դա մեր մէջ առաջին ամբողջական փորձն էր, որ տալիս էր մեր նորագոյն գրականութեան նշանաւոր գէմքերի գրական-քննադատական անայիզը:

Եյզպէս վերին աստիճանի տոկունութեամբ Լէօն առաջ տարաւ իր հրատարակախօսական գործունէութիւնը մինչև 1906 թ., երբ նա ստիպւած էր թողնել «Մշակ»-ի խմբագրութիւնը, որի հետ այնքան սերտ կերպով կապւած էր Լէօի սնունդը:

Նա հեռացաւ «Մշակ»-ից ֆիզիքապէս բոլորովին քայքայուած և սաստիկ հիւանդ դրութեամբ: Գրանից յետոյ նա մի տարի ուսուցիչ եղաւ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ միևնոյն ժամանակ Էջմիածնի Մազնազարանից նիւթեր ժողովել իր ազգայ մի մեծ աշխատութեան համար, որի վերնադիրն է «Հայոց պատմութիւնը 16-րդ դարից մինչև մեր օրերը»: Դա պատմական նշանակութիւն ունեցող մի այնպիսի գործ է, որի կարիքը մեզ մօտ վաղուց է զգացւում: Եյզ աշխա-

ոււթիւնը պէտք է բաղկացած լինի երեք խոշոր հատորներից: Առաջին հատորը, որ այժմ բոլորովին պատրաստ է, ամփոփում է իր մէջ Հայոց մանրամասն պատմութիւր 16-ից մինչև 19-րդ դարու քակրքը: Հայերի վերջին զարի պատմութիւնը (19-րդ) նա ամփոփել է երկու, զեռ ևս անպատրաստ հատորներում և օգտուել է հայկական ու ռուս բազմաթիւ աղբիւրներից: Նրա մէջ ամփոփուած են հայկական աւելի ուշ ժամանակների գաղթականութիւնների պատմութիւնը, որոնք մինչև այժմ ոչ մի տեղ լոյս չեն տեսել. օր. Երուսաղէմի, Արիմի, Հաշտարխանի, Գեանբրուրգի, Տրանսիլվանիայի և Չերքէզահայերի գաղթականութիւնները: Լէօի վերջին այդ մեծ գործը ունի նաև մի ընդհանուր պատմական ակնարկ հայերի անցեալի մասին, պատմական ամփոփումներ և մի առանձին ընդարձակ պլուլս «Մահմեդական կալուածատիրութիւնը» վերնագրով: Սակայն այդ աշխատութիւնը, որի հրատարակութիւնը հեղինակի նիւթական կարողութիւնից շատ բարձր է, սպասում է զեռ հրատարակիչների:

Մի քանի խօսք էլ Լէօի մասին, իբրև հասարակական գործչի: Բացի գրական գործունէութիւնից, Լէօն մասնակցել է նաև մեր մի քանի հասարակական հիմնարկութիւններում իբրև գործիչ: Եյդ գործունէութիւնը աւելի եռանդուն է եղել մանաւանդ Չուշում, որտեղ մեծ դեր է կատարել իբրև Չուշում թեմական դպրոցի հոգարարձու և Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան Չուշում ճիւղի գանձապահ, քարտուղար և նախագահ: Լէօի հոգարարձու-

թեան ժամանակ թեմական դպրոցի եկամուտը 8000-ից հասնում է մինչև 17,000 ռուբլի, դպրոցը ունենում է ուսուցչական լաւ խումբ, իսկ բարեգործական ընկերութեան Չուշում շատ հարուստ գրադարանը Լէօի ջանքերի ստեղծածն է: Թիֆլիզում նա եղել է Հայոց Հրատարակչական ընկերութեան խմբագրական մասնաժողովի գործունեայ անդամներից մէկը և այլն:


Եթէ վերցնենք նրա բոլոր գրուածքները, կտեսնենք, որ նա մեր նորագոյն գրականութեան խոշոր դէմքերից մէկն է կազմում, որի ամբողջ գործունէութիւնը նախընտրած էր հայ հասարակութեան մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան գործին, որի համար և նա դրաւեց հայ հասարակութեան հաւատը և խորին յարգանքը: Գրան իբրև ապացոյց ծառայում է գրական այն մեծ ժողովրդականութիւնը, որ նա վայելում է հայ ընթերցողների շրջանում:

Սակայն ներկայումս վերին աստիճանի աննախանձելի է Լէօի գրութիւնը: Գրական երկարամեայ գործունէութիւնից յետոյ նա հիւանդացել և ժամանակաւորապէս ընդհատել է իր այնքան սիրած գրական աշխատանքները: Լէօն զեռ ևս գտնուում է իր ընդունակութիւնների զարգացման նախանձելի շրջանում և կարող է աւելի օգտակար հանդիսանալ մեր դրականութեան, եթէ նա նիւթական քիչ շատ նախանձելի սլայմանների մէջ լինի իր քայրաջուած առողջութիւնը վերականգնելու համար:

Եւ այժմ, երբ Թիֆլիզը նախապատրաստուած է տենելու բազմաշխատ և բեղմնաւոր Լէօի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը, հայ հասարա-

կութիւնը պէտք է աշխատի գործով ցոյց տալ իր
յարգանքը նշանաւոր դրող Լէօին, եթէ ցանկանում
է ապագայումն էլ նրանից գրական աշխատանքներ
պահանջել: Լէօն մեր այն գրողներէն է, որին մեր
ժողովուրդը բարոյապէս պարտաւոր է նիւթականա-
պէս ապահովել:

Նրա յօրեյեանիւ ժամանակին ցոյց կը տայ մեր
ժողովրդի բարոյական տոկոսնութեան և քաղաքա-
ցիական պարտաճանաչութեան աստիճանը:



935

